

ղեղին եւ ոչ ալ սրտին մէջ կը գտնուի, եւ քիչ մ'ետքը Ռուսմանիայի՝ իւր համօրէն որդւոց ջանքովն իւր արդի տէրութիւն հաստատուելէն ու արեւելեան պետութեանց մէջ՝ տեղի գտնելէն վերջը՝ այս ամէն բանէ ետքը, կ'ըսենք, Ռուսմանացւոց համար Հայերն ատելու եւ զանոնք հասարակաց կեանքէն մերժելու՝ ինչպէս եւ վերջնոց համար իրենց այն կղզիացեալ կեանքը շարունակելու ամէն արդար պատճառ այլ եւս գաղթած է. այն ժամանակէն ի վեր սկսած է դարձեալ՝ Հայոց երկրին տիրող տարեր հետ ձուլուիլը: Կոր սերնդեան պիտոյից անբաւական դպրոցաց երեսէ ձգուելովն յառաջ եկած լեզուին կորուստը, ինչպէս եւ երկրորդաբար՝ անպարտութեանց կորսուիլը՝ որ առաջնոյն հետեւութիւնն է, յայտնապէս կ'ապացուցանեն թէ ժամանակն իւր գործը կը կատարէ: Եւ այս ձուլուիլը՝ որուն վրայ ոմանք թերեւս ցաւին կամ ոչ՝ յաջորդաբար կը յառաջանայ երկրին քաղաքակրթող կարգադրութեանց պաշտպանութեան ներքեւ, որոնց ազդեցութիւնը ոչ որ կրնայ չափաւորել, թող թէ խափանել: Չուրման այս յառաջագիւտութիւնը չեն կրնար յապաղել այն սակաւութիւ անձինք՝ որ ուսումնական մարդու բնական զգածմամբ՝ ուղելով իրենց գոյութեան աղբերքը ճանչնալ՝ կ'ուսանին իրենց նախնեաց լեզուն ու պատմութիւնը, ինչպէս եւ չեն կրնար նոյն փութացրնել անոնք՝ որ պախարակելի զգածմամբ մը կը ծածկեն իրենց անունն ու ծագումը, որպէս զի փոխանակ Հայկն ու Արամը՝ զՏրայանոս ու Արեղիանոս իրենց նախնիք հրատարակեն:

Այս տողերս աւարտելով՝ չենք կրնար նկատել որ եթէ այս՝ ազգային պատմութեան համար ամենամեն ճիսութիւն ունեցող քննադատին նորագոյն եւ յիշատակարանաց աւելի համաձայն կարծիքս՝ Ռուսմանացւոց առ Հայս զգածմանց նկատմամբ՝ Մինասայ ողբերգութեան հետ կը հանդիպի այնպէս՝ ինչպէս si parva licet componere magnis առածը կ'ըսէ, եւ թէ իւր այս նոր կարծիքը՝ նախորդէն նուազ նպաստաւոր է ուսմանական ժողովրդեան համար՝ այսու հանգերձ նոյնին ճանչցուելովն ու հրատարակուելովն երկրին փառքը չի նսեմանար ամենեւին: Պր. Հաշտէու իւր վերջին ուսումնասիրութեամբն ամէնուն՝ բայց գլխաւորաբար մեղ եւ մեր յունածէս Ռուսմանացի եւ հայածէս Ռուսմանացի սերնդոց տուաւ նոր միջոց մ'եւս, որով կարող ենք այժմ՝ գնահատել ըստ արժանւոյն Ռուսմանիայի կրած դժուարութիւններն

ու կանգնած յաղթանակները հանգերձ ամենայն արժանեօք զոր ստացած է ճշմարիտ քաղականութեան պատերազմի դաշտին վրայ:

Իրաց ներկայ վիճակն նկատելով՝ կ'երեւայ մեզ թէ խղճի մտաց այն նախակարգ ու էական ազատութիւնը՝ ազգային ժառանգութիւնը կազմող իրաւանց ու ազատութեանց ցանկին մէջէն երբեք պակասած չէ, երեւոյթ մը որ կը ցուցնէ թէ մարդս որչափ դիւրամէտ է բարեոյն վարժելու եւ չարը մոռնալու: Մեր այսօրս վայելած կարգաւորութեանց համար մեծարանքն ինչպէս եւ երախտագիտութիւնն՝ այն անձանց նկատմամբ՝ որոնք երկիրն օտար եւ իրեն այնչափ միասակար ազդեցութիւններէն ազատելով՝ կրցած են իւր որդւոց մէջ եղած ատելութիւնը դուրսիլ ու արդիւնաբեր նախանձաւորութեան մը փոխել, որով միաբան կ'աշխատին հասարակաց երկրին բարօրութեան ու երջանկութեան՝ — զգալաբար կ'աճին՝ երբ կը նկատենք այն ժամանակներն եւ ստոյգ վիճակները՝ որով կարող կ'ըլլանք համեմատութիւն մ'ընել ներկայիս ու հազիւ հնարաւոր երեւցող անցելոյ մը մէջ:

Գ. Մ. ՊՂՅՂՔԵԱՆ



Ա Յ Ի Ա Ր Հ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Կ Ա Ի Կ Ա Ս
2.

Կովկասի Ռուսաց տիրապետութենէն ետքն եղած ազգահամարները նշանաւոր զարգացում մը կը ցուցնեն. 1876ին Կովկասի բնակիչները հաշուեցան 4,661,000 հոգի, 1877ի մարդահամարն այս թիւը բարձրացուց 5,391,000 հոգւոյ, վերջապէս 1882էն ետքն եղած այլեւայլ մարդահամարները ցուցուցին որ Կովկաս մէջն առնելով նոր առնուած երկիրներն, այսինքն Կարս (162,000) եւ Բաթում (92,000) գաւառներն, կը սնուցանէր 1885ին 7,307,849 հոգի: Խտութեան կողմանէ հիւսիսային Կովկասի մէջ 10,3 հոգի կ'իյնայ ամէն քառակուսի հազարամեզրի վրայ, կենդրոնականին մէջ՝ 13,6, որ նման է եւրոպական Ռուսիոյ հարաւային մասին: Բութայիս, Երիւան եւ Տփղիս նահանգները շատ աւելի խիտ բնակութիւն ունին, այսինքն՝ Բութայիս 33,6, Երեւան՝ 20,8 եւ Տփղիս 17,8 ամէն քառակուսի հազարամեզրի վրայ: Մեծեւոյց վրայ ծննդոց աճումն է ճիշդ 13 հոգի 1000